ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

17 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 66

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության և բնակավայրերի նշանակության հողերը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:
2. Հողամասերի օտարման մեկնարկային գին սահմանել տվյալ պահին գործող կադաստրային արժեքի չափով:
3. Արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության և բնակավայրերի նշանակության հողամասերի օտարման պայմաններն հաստատել համաձայն թիվ 1 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ

Գ. ԲԱԲՈՒՋՅԱՆ

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Վ. ԷԼԲԱԿՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

17 սեպտեմբերի 2021թվական
գյուղ Ախուրյան